

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ «ԷՂՈՒԱՐԴ ԵՒ ՀԷԼԷՆ ՄԱՐՏԻԿԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ» ԶՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԱԾ ՊՂՆՁԵՂԷՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի յանձնարարութեամբ 1993թ. Դեկտեմբերից մինչև 1994թ. Մարտի կեսերը նկարագրեցի «Էղուարդ եւ Հելեն Մարտիկեան Քանգարանի» պահոցներում գտնուող 600 պղնձէ առարկաներ, որոնք մինչ այդ ցուցակագրուած չէին: Երկար տարիներ դրանք չէին օգտագործուել եւ կուտակուած էին վանքի սեղանատան պահեստներում յետոյ տեղափոխուել էին Քանգարան: Այդ առարկաների արժէքը յատկապէս բարձրացնում են նրանց վրայ եղած արձանագրութիւնները, որոնց մէջ գրանցուել են նուիրողի կամ տիրոջ անունները, երբեմն դրանք ստացող եւ վանք բերող նուիրակի անունը եւ նուիրատուութեան թուականը: Որոշ արձանագրութիւններում միայն ստացողի անունն է՝ թուականով կամ առանց դրա: Կան նաեւ առանց արձանագրութեան առարկաներ:

Ցուցակի մէջ գրանցուել են նաեւ առարկաների վրայ եղած արձանագրութիւնները, որոնց վերծանմանը խոչընդոտ էր հանդիսանում առարկաների ծայր աստիճան կեղտոտուած եւ երբեմն էլ չափազանց ժանգոտած լինելը:

Հարկ է նշել, որ պահոցներում եղած պղնձեղէն առարկաների թիւը շատ մեծ է

եղել, ոմանց ասելով՝ աւելի քան 10,000 կտոր, բայց ժամանակի ընթացքում նրանց զգալի մասը որպէս մետաղ վաճառուել է պղնձագործներին:

Ցուցակագրուած պղնձեղէն առարկաները փսէներ, պնակներ ու թասեր են, կան նաեւ սկուտեղներ, տաշտեր (լագաններ), դոյլեր, կաթսաներ, շերեփներ, կաթսաների կափարիչներ, ջրամաններ, սափորներ ու գաւաթներ: Պահպանուել են օղբորման կաթսայի կափարիչ, կերակուր տեղափոխելու ամաններ եւ այլ իրեր:

Այդչափ մեծ թուով պղնձեղէնի առկայութիւնը վանքի սեղանատանը կապուած է վանք այցելող ուխտաւորների եւ հիւրերի մեծ քանակի հետ: Դարեր շարունակ Երուսաղեմ են ժամանել հազարաւոր հայ ուխտաւորներ, որոնք տեղաւորուելով Ս. Յակոբեանց վանքին պատկանող տներում, ստացել են ոչ միայն անկողնու պարագաներ, այլև նաշի պատրաստման ամաններ եւ կերակրի սպասք: Ըստ Սիմէօն Լեհացի ուղեգրի, որը Երուսաղեմում է եղել 17րդ դարի սկզբներին, Ս. Յակոբեանց վանքն ունեցել է 365 «վիմաշէն ու քարուկիր» տուն, ուր ապրում էին ուխտաւորները: Սկզբի օրերին պատրիարքն էր հոգում նրանց սնունդը. «Եւ զամէն ուխտաւորս Պարոնտէրն իրեք օր պիտոր կերակրէ, թէեւ հազար հոգի է»(1):

1. Սիմէոն Դպրի Լեհացոյ ուղեգրութիւն, տարագրութիւն եւ յիշատակարանք. Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս վ. Ակինեան Մխիթարեան Ուխտէն, Վիեննա, 1936, էջ 250:

Փոքր չէր նաև վանճում մշտապես բնակուող միաբանների, ինչպես նաև նգնաւորների ու մայրապետների թիւը:

Հետագայ ժամանակներում ուխտաւորների հոսանքն անլի ուժեղացաւ: Յայտնի աշխարհագիր ու պատմաբան Նեոշուա Պէն Արիէն իր «Նրուսաղէմը 19րդ դարում» աշխատութեան մէջ, յենուելով ժամանակակից հեղինակների գործերի վրայ, ուշագրաւ տեղեկութիւններ է բերում Նրուսաղէմ եկած հայ ուխտաւորների մասին: Այսպէս, Նորովը (1830թ.) նշել է, որ հայոց վանքի շրջապատում ուխտաւորների համար կային մօտ 700 փոքր սենեակներ: Ուիլսոնը 1843թ. գրում է, թէ վանքը երկու-երեք հազար ուխտաւորի տեղ ունի: Իսկ ուրիշ աղբիւրների վկայութեամբ Ջատկուայ շրջանին վանքը կարող էր հիւրընկալել շուրջ 4000 ուխտաւորների: Ըստ Թօպլերի 1846թ. գրութեան, պատրիարքից բացի վանքում բնակուում էին 120 վանականներ: 1857թ. Պարիլեյը վկայել է, որ վանքը հնարաւորութիւն ունի հիւրընկալել 8000 ուխտաւորների: Ըստ Հիւմանի, Ս. Յակոբեանց վանքն ունէր շուրջ 1000 սենեակներ՝ 4000 ուխտաւորների կեցութեան համար:(2):

Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ վանքն ընդունեց 1500ից անլի կիլիկեցի գաղթական հայերի, որոնց խնամքը եւ կերակրումը վերցրեց իր վրայ: Նոյնը կատարուել է նաև Արար-Հրէական պատերազմի ժամանակ, երբ վանքը լցուել էր իրենց տներից փախած հազարաւոր հայ գաղթականներով:

Այդքան մեծ թուով մարդկանց ընդունելու եւ կերակրելու համար անհրաժեշտ էր խոհանոցային առարկաներ

եւ սեղանի սպասք՝ մեծ ու փոքր կաթսաներ, շերեփներ, թասեր, դոյլեր, թաւաններ եւ, ի հարկէ, մեծ քանակութեամբ ասիւէներ, պնակներ, գաւաթներ, գդալներ եւ այլն: Բացի ուխտաւորներից, վանքը մշտապէս ընդունում էր մեծապատիւ հիւրերի, որոնց հիւրասիրման համար, հասկանալի է, օգտագործում էր անլի բարձրորակ ու թանկարժէք սպասք:

Վանքի սեղանատունը ժամանակի ընթացքում ձեռք էր բերել վերոյիշեալ առարկաները, որոնց մեծ մասը պղնձեայ էին: Դատելով պահպանուած իրերից, դրանք բոլորը պարբերաբար կլայեկուել են, այլապէս անհնարին կը լինէր օգտագործումը: Կլայեկումը կատարուել է ըստ պահանջի եւ պարբերաբար: Թէ՛ հնագոյն եւ թէ անլի մօտ ժամանակներում Ս. Յակոբեանց վանքն ունեցել է իր կլայեկագործները: Մետրոպ վրդ. Նշանեանի օրագրութեան մէջ տեղեկութիւն կայ դրանցից մէկի մահուան մասին: Նա գրում է, որ 1917թ. Դեկտեմբերի 8ին «Վախճանեցաւ Նրուսաղէմայ ծերունի Գեորգ Ճըլլըխ կլայեկագործ»(3):

Պղնձեայ առարկաները փշանում, ձեւափոխուում էին: Վանքն ունէր պղնձագործ վարպետ, կամ նաև այլ աշխատանքներ կատարող դարբին, որը նորոգում էր դրանք: Որոշ իրերի վրայ երեւում են նորոգման հետքեր: Կոտրուած մասերի վրայ յաճախ դնում էին պղնձեայ կարկատաններ եւ գամերով ամրացնում:

Ի հարկէ, ամէն բան չէ, որ պահպանուել ու հասել է մեր օրերը: Բնական ու անխուսափելի կորուստներին ու յափշտակութիւններին գումարուել է նաև պղնձեղէնի հարկադիր վաճառքը: Այսպէս, երբ Պետրոս պատրիարքի մահից

2. Նրուսաղէմը ժժ դարում, թարգմ. Յարութիւն սարկաւագ Պօղոսեանի, «Ջուարթնոց» պարբերաթերթ, Նրուսաղէմ, 1980, էջ 61-62:

3. «Սիռն», Նրուսաղէմ, 1992, թիւ 4-5-6, էջ 108:

յետոյ Ս. Յակոբեանց վանքը ստիպուած է եղել մեծամեծ գումարներ տալ մահմեդականներին. «Այդ օրերուն Միաբանութիւնը կը հարկադրուի վաճառել նաեւ խոհանոցային պղնձեղէններ»(1):

Մեր նկարագրած 600 առարկաներից 12ը 16րդ դարի են՝ մեծ մասամբ բարձր հիմքեր ունեցող թասեր, 17րդ դարից պահպանուել են 19, 18րդ դարից 567, 20րդ դարից 2 պղնձ առարկաներ:

Ինչպէս տեսնում ենք, ամէնից շատ ներկայացուած է 18րդ դարը: Ուխտատրներ քիչ չէին նաեւ նախորդ դարերում, բայց ժամանակի ոչնչացնող ձեռքը թոյլ չի տուել նրանց օգտագործած ամանեղէնը ամբողջութեամբ հասնի մեզ: Զի բացառուում, որ սեղանատան ամանների մէջ գերակշռել են կաւէ փսէները, գաւաթներն ու սափորները, որոնք հնում շատ տարածուած էին եւ որոնց այնքան էլ երկար չէր տևում:

Ցուցակագրուած պղնձ առարկաները պատրաստուած են թէ՛ ձուլման ու կռելու, եւ թէ՛ դրուագելու եւ ննջման միջոցով: Արձանագրութիւնները, ընդհանուր առմամբ փորագրուել են վարպետութեամբ ու նաշակով, թէպէտ նրանց մէջ քիչ չեն պարզունակ ձեւով ու սխալներով կազմուածները:

Ս. Յակոբեանց վանքի սեղանատան սպասները յուսալիօրէն պահելու համար 1869թ. պատրաստուել է կնիք եւ ննջման միջոցով նրանց վրայ դրոշմուել «ՍԲ. ՅԿԲ. 1859» յապաւում գրութիւնը, որ նշանակում է «Սուրբ Յակոբ 1859»: Դրոշմակնիքը չի փոխուել եւ երկար ժամանակ այդ դրուել է նաեւ աւելի ուշ ժամանակ ձեռք բերուած առարկաների

վրայ: Դրոշմակնիքը սովորաբար դնում էին առարկաների այն մասում, որտեղ արձանագրութիւններն էին: Այսինքն նրա վերին եզրերին: Սակայն ոչ քիչ թուով իրեր դրոշմակնուել են մի քանի անգամ եւ կնիքը դրուել է տարբեր տեղերում՝ նաեւ յատակին ու մէկ անգամ էլ արձանագրութեան արանում: Կնիքը երբեմն լաւ չէ դրոշմուել եւ դարձել է անընթեռնելի:

Առարկաները նկարագրելիս ցուցակի մէջ գրանցել ենք նրանց հերթական համարը, որը գրել ենք նաեւ առարկայի վրայ, տեղ ենք թողել մայր գոյժամատեանի ու նեգատիւի թուերն աւելացնելու համար, ապա նշել ենք առարկայի ինչ լինելը, նիւթը, ժամանակը, խիստ համառոտ նկարագրել վիճակը, տուել ենք չափսերը՝ բարձրութիւնը, տրամագիծը, շրջանագիծը: Վերջում ամբողջութեամբ վերծանել եւ արտագրել ենք արձանագրութիւնը՝ մի երկու բառով նշելով նրա տեղը առարկայի վրայ: Տարեթուերի կողքին, որոնք գլխաւորապէս հայկական թուականով են, փակագծերի մէջ դրել ենք նաեւ ընդունուած թուականը: Բոլոր առարկաների համար պատրաստել ենք քարտեր, որոնց վրայ մեքենագիր ձեւով նշել ենք անհրաժեշտ տեղեկութիւնները առարկաների վերաբերեալ՝ հարցերի վերը բերուած յաջորդականութեամբ: Քարտերի յաջորդ երեսներին մեքենագրել ենք արձանագրութիւնները՝ առանց որեւէ յապաւում: Մի շարք առարկաների վրայ եղած արձանագրութիւններն արաբատառ են կամ լատինատառ, մի դէպքում էլ կիրիլիցայով (ռուսատառ): Կան իրեր, որոնց հայերէն արձանագրութեան վերջում

1. Տիգրան Հ.Թ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Եպս. Նշանեան, Երկրորդ հատոր, Երուսաղէմ, էջ 819:

տարբերիլը գրուած է արաբական տառերով: Դա ընդունուած էր այն ժամանակ եւ երբեմն տարբերիլը նշում էին արաբատառ նոյնիսկ գերեզմանաքարերի վրայ: Այդպիսի տապանաքարեր տեսել ենք Ս. Փրկիչ վանքի գերեզմանատանը:

Մի պնակի վրայ, որը 1807թ. Ս. Յակոբի վանքին է նուիրել Ադանացի սափրիչ, մահտեսի Սարգիսը, արձանագրութեան վերջում դրուած է հրեական վեցաթեւ աստղ: Կան նաեւ արձանագրութեան սկզբում կամ վերջում դրոշմուած խաչեր: Մի քանի առարկաներ ունեն գարդանաշխեր: Որոշ քասեր, յատկապէս 16րդ դարից պահպանուած բարձր հիմք ունեցողները, պատրաստման տեխնիկայով տարբերուած են միւսներից նաեւ ատամնաւոր շուրթերով: Մեծագոյն մասը գուրկ է գարդերից եւ նախատեսուած է ամէնօրեայ օգտագործման համար:

Առարկաների արձանագրութիւնների ընթերցումից յայտնի է դառնում, որ նրանց նշող մեծամասնութիւնը նուիրուած է Ս. Յակոբեանց վանքին (ի դէպ, բոլոր արձանագրութիւններում Ս. Յակոբի կամ Սուրբ Ակոբի վանք է), բայց առանձին առարկաներ տրուել են Ս. Յարութեան, Ս. Մինասի, Ս. Աստուածածին վանքերին, ինչպէս նաեւ Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքին (1776թ. մի արձանագրութեան մէջ այդ քաղաքի անունը «Բէթ Լէհիմ» է թիւ 195):

Արդէն վերը նշեցինք, որ արձանագրութիւնների մէջ յաճախ յիշուած է նուիրատուի անունը կամ այն անձի անունը, որի յիշատակին տրուել է առարկան: Յաճախ գրուած է նաեւ նուիրատուութիւնն ընդունող նուիրակ վարդապետի անունը: Օրինակ. «ՅԻՇԱՏԱԿ Է ԹՈՒԱԹՅԻ ՄԱՀՏԵՍԻ ՀՐԱԲԻՕՆԻՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐԱՅ ԱԹՈՒՆ ՋԵՌԱՄԲ ՆՎԻՐԱԿ ՅԱՐՈՒԹԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՌՄՆԵ» (1796թ.) թիւ 213:

Մի քանի արձանագրութիւններ շատ «սակաւախօս» են եւ կրում են միայն տիրոջ անունը: Օրինակ՝ «ԱՎԵՄԻԲ» (թ. 76): Իսկ երբ առարկաները նուիրուած են մի քանի անձանց «յիշատակին», ապա անպայման նրանց անունները յիշուած են արձանագրութեան մէջ: Վկայակոչենք ցուցակում 31րդ համարի տակ գրանցուած առարկայի արձանագրութիւնը. «ՅԻՇԱՏԱԿ Է ԹՈՒԱԹՅԻ ՄԱՀՏԵՍԻ ՅՕՀԱՆՆ, ՅԱԿՈՐԱՆ, ԻՄԻՐՋԷՆ Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐԱՅ, ՋԵՌԱՄԲ ՍԻՄԷՕՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՌՄՆԵ» (1766 թ.):

Կան իրեր, որոնք նուիրուած են համայնքի անունից կամ ժողովրդի կողմից: Այդպէս էլ նշուած է արձանագրութեան մէջ: Այդ տեսակետից շատ բնորոշ է 1821թ. Թօխար (Եվդոկիա) քաղաքի «հաւասար ժողովուրդին» Կ. Պոլսեցի նուիրակ Յակոբ վարդապետի «ձեռամբ» ուղարկուած տասնեակ փստները, որոնցից պահպանուել են եւ մեր կողմից ցուցակագրուել 44 նմուշներ: Նրանց բոլորի վրայ նոյնաբնոյթ արձանագրութիւն է. «ՅԻՇԱՏԱԿ Է ԹՈՒԱԹՈՒ ՀԱԻԱՍՍԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՋԵՌԱՄԲ ՆՈՒԻՐԱԿ ՊՕԼՍԵՅԻ ՅԱԿՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ Ի ԴՈՒՌՆ ՅԱԿՈՐԱՅ ՈՐ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ՌՄՀ» (1821թ.) թ. 168:

Ճիշտ այսպիսի արձանագրութիւններ են կրում Յակոբ Պոլսեցու բերած բոլոր փստները: Դրանք սովորականից աւելի մեծ փստներ են, չափսերն են՝ բարձրութիւն՝ 3 սմ. տրամագիծ՝ 27-28 սմ, շրջանագիծ՝ 86-88 սմ: Նրանց մշակումը կատարուել է մեխանիկական եղանակով եւ միւսներից տարբերուած են իրենց կարմրաւուն գոյնով: Նրանք կլայկուած չեն եւ բոլոր հիմքերը կան կարծելու, թէ նրանց մի մասը երբէք չի օգտագործուել: Բոլոր արձանագրութիւնները կատարուած են նոյն անձնաւորութեան կողմից:

Պղնձէ առարկաների ուսումնասիրու-

թիւնը ցոյց տուեց, որ նրանց մի զգալի մասը բերուած է Թօթատից: Այդ մասին ուղղակի նշում կայ արձանագրութիւնների մէջ: Կամ էլ նուիրատուները այդ ֆաղափից են, հետեւապէս եւ դարձեալ սխալ չի լինի կարծել, որ արտադրուած են այնտեղ: Կարելի է հաստատապէս պնդել, որ յատկապէս 18րդ եւ 19րդ դարերում պղնձագործութիւնը շատ զարգացած է եղել Թօթատում:

Մեծ թիւ կազմող պնակների ու փսէների հետ չեն պահպանուել գոյւներ, դանակներ ու պատառաֆաղներ: Անկասկած, այն ժամանակներում օգտագործման մէջ եղել են անելի շատ փայտէ, քան մետաղէ գոյւներ, որոնք շուտ էին փտանում եւ չեն պահպանուել: Բացի այդ, չմոռանանք, որ թանգարան տեղափոխուել են պատմական արժէքներ կայացնող իրերը՝ որոշակի ընտրութեամբ: Այս պատճառով պղնձեղէն առարկաների մէջ գլխաւորապէս արձանագրութիւններ ունեցող նիւթեր են:

Արձանագրութիւնները կազմուած են այն ժամանակ ընդունուած կաղապարով: Պղնձագործ վարպետները կամ էլ արդէն պատրաստի առարկայի վրայ գրութիւն անողները, հետեւելով միմեանց, կազմում էին արձանագրութիւնները՝ խստօրէն հետեւելով շարադրման ձեւին: Բերենք մի քնորոշ օրինակ. «ՅԻՇԱՏԱԿ Է ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄԱՀՏԵՍԻ ԱՐՈՒԹԻՒՆԻՆ ԿՈՂԱԿՑՈՒՆ ՄԱՀՏԵՍԻ Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԱՅ ԱԹՈՒՌՈՅ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ՌՄԻԷ» (1778թ.)
թ. 255:

Կան շատ առարկաներ, որոնց նուիրատուն կամ նուիրատուները չեն ցանկացնել նշել իրենց անունները: Արձանագրուած է միայն ստացողը. «ՅԻՇԱՏԱԿ Է ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԱՅ ԱԹՈՒՌՈՅ ԹՎ. ՌՄԻԷ» (1778թ.)
թ. 35:

1844թ. մեծ թուով փսէներ են

բերուել Ս. Յակոբի վանք: Դժբախտաբար, հնարաւոր չեղաւ պարզել, թէ ո՞վ է բերել եւ ո՞րտեղից, քանի որ արձանագրութեան մէջ ասուած է միայն հետեւեալը. «ԵՐՈՒՍԱՂԷՄ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒ 1844»: Կարելի է ենթադրել, որ սրանք նուէրներ չեն եւ գնուած են վանքի կարիքների համար: Եւ նման հարցերին կարելի է նշգրիտ պատասխան տալ, երբ զուգահեռ ուսումնասիրուեն նաեւ վանքի տնտեսական գործունէութեան հետ կապուած փաստաթղթերը եւ նուիրակների գրագրութիւնները:

Առարկաների մի մասը ձեռք է բերուած Նրուսաղէմում եւ նուիրուել վանքին: Հենց տեղում պղնձագործ վարպետը փորագրել է արձանագրութիւնը եւ նուիրատուի ցանկութեամբ գրել համապատասխան նուիրատուական ձօնը: Ցուցակագրուած առարկաների մեծագոյն մասը պատրաստուած է մեծ վարպետութեամբ: Նրանցից մի քանի տասնեակի պատրաստման ժամանակ կիրառուել է յատակը ատամնաւոր ելուստների միջոցով վերին մասին միացնելու քարդ տեխնիկա: Պղնձագործ վարպետներ՝ թասերը, կաթսաները, փսէները ու միւս առարկաները յաճախ նշման ու դրուագման միջոցով զարդարել են զարդանախշերով: Մի շարք առարկաների, մեծ մասամբ թասերի շուրթեր դարձրել են ատամնաւոր:

Աշխատանքի ընթացքում մեզ յատկապէս հետաքրքրեցին 18րդ դարի երկու առարկաներ՝ թաս եւ պնակ, որոնց վրայ կատարուած արձանագրութիւնները շրջուած ձեւով են: Պղնձագործ վարպետը արձանագրութիւնը կատարել է հայելու օգնութեամբ, հետեւապէս եւ դրանց ընթերցումը հիմա հնարաւոր է միայն հայելու միջոցով (թ.թ. 281 եւ 350): Նմանօրինակ գրութիւններ հանդիպում են հայերէն ձեռագրերի յիշատակարաններում:

Արձանագրութիւնների մէջ կան անընթեռնելի տեղեր՝ մաշուածութեան, նորոգման եւ այլ պատճառներով: Քիչ չեն անընտարութիւնները: Սակաւաթիւ հանդիպում են աւելորդ տառեր, ջնջուած տեղեր ու կրկնութիւններ: «Նվիրակ» բառը ունի երկու գրութիւն՝ «նուիրակ» եւ «նվիրակ»: Մի տեղ էլ՝ «նվերակ» (1778թ.) թ. 53:

Երուսաղէմը երբեմն գրել են նաեւ «է»ով՝ «էրուսաղէմ», նաեւ «Երուսաղիմ» (1744թ.) թ. 57: Սուրբ Յակոբ վանքը գրել են նաեւ «Սուրբ Ակոբ» եւ նոյնիսկ՝ «Սուրբ Յաֆօր» (17րդ դ.) թ. 105: Թոխաթը հանդիպում է թէ «ո»ով եւ թէ «օ»ով («Թօխաթ» եւ «թոխաթ»): Յակոբ անձնանունը եւս գրուել է նաեւ «Ակոբ», «Յարութիւն»ը՝ «Արութիւն»: Նոյն ազգանունը նոյն անձի կողմից նուիրաբերուած երկու առարկաների վրայ հանդիպում է տարբեր ձևով. «Փօրէկեան մահտեսի Յօհաննէս» (1804թ.) թ. 50 եւ «Պօրէկեան մահտեսի Յօհաննէս» (1804թ.) թ. 209:

Տարբերութիւնների մէջ նկատուելի են հետեւեալ սխալը. 1833թ. Վանքի Պօղոս վարդապետի բերած մի պնակի վրայ արձանագրութեան վերջում տարբեր գրելիս փորագրիչ վարպետը սխալ է նշել տառը՝ շփոթելով «Բ» եւ «Զ» տառերի տեղերը: Նա փորագրել է «ՌՄԲԶ», որն անհասկանալի է, պէտք է լինէր «ՌՄԶԲ», որը նշանակում է 1833թ. (թ. 90):

Արձանագրութիւններին մէջ նուիրատուները երբեմն յիշատակուած են ըստ մասնագիտութեան՝ «մօմնի» (թ. 211), «սափրիչ» (թ. 156), «ղարպասնի» (թ. 229), «ղազաննի» (թ. 571): Ուշագրաւ է այս առումով 1796թ. Յարութիւն վարդապետի միջոցով նուիրուած պնակի վրայի գրութիւնը: Բերում ենք այն ամբողջութեամբ:

«ՅԻՇԱՍԱԿ Է ԹՕԽԱԹՑԻ ՆԱԽԱՇ ՅԱԿՈՒԲԻՆ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲՑ

ԱԹՈՌՈՑՆ ԶԵՌԱՄԲ ՆՎԻՐԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՌՄԽԵ ԹՎԻՆ» (թ. 180):

18րդ դարում «նաղաշ» անուանում էին նաեւ նկարիչներին: Յիշեմք Քիֆիլիսում գործող հռչակաւոր հայ նկարիչ Նաղաշ Յովնաթանին: Ինչպէս երևում է, 18րդ դարում Թօխատում եւս գործել է մի նկարիչ՝ «Նախաշ Յակոբ», որի վերաբերեալ, ցաւօք, այլ տեղեկութիւններ մեզ յայտնի չեն:

Ուշագրաւ է 18րդ դարին պատկանող մի ափսէի վրայ եղած արձանագրութիւններ: Արդէն նշել ենք, որ ցուցակագրուած առարկաներից երկուսի վրայի արձանագրութիւնները շրջուած վիճակում են եւ ընթերցել կարելի է միայն հայելու օգնութեամբ: Այդ արձանագրութիւններից մէկը ստորեւ բերում ենք ամբողջութեամբ.

«ՅԻՇԱՍԱԿ Է ԹԵՓՍԻՄՆ ՈՐ ՀԱՏԻՆ Ի ԴՈՒՌՆ ՅԱԿՈՒԲՑ» (թ. 350) «Թեփսի» որ արաբերէն նշանակում է ափսէ կամ աման, այստեղ յոգնակի է, նշանակում է, որ պատրաստուել են շատ ափսէներ եւ բոլորի վրայ դրել են նոյն բովանդակութեամբ գրութիւններ: Ուրեմն 18րդ դարում Ս. Յակոբի վանքի շրջափակում եղել է պղնձաձուլական արհեստանոց, որի արտադրանքից մէկ նմուշ գտնուում է մեր նկարագրած առարկաների մէջ: Ս. Յակոբի վանքին նուիրուած գործերում ոչ մի յիշատակութիւն չկայ այդ արհեստանոցի ու նրա գործունէութեան վերաբերեալ: Կարծում ենք, որ քանգարանի պահոցներում եղած միւս պղնձէ առարկաների, ինչպէս եւ Ս. Յակոբեանց վանքի դիւանական փաստաթղթերի ուսումնասիրութիւնը լրացուցիչ տեղեկութիւններ կարող է տալ այդ արհեստանոցի մասին: Ասեմք միայն որ մեզ հասած այս միակ նմուշը պատրաստուած է վարպետութեամբ եւ քիչ

չափով է տարբերում այլ վայրերում, մասնատրապետ Թօխաթում պատրաստուած ամաններից:

Շատ արժեքաւոր է Յարութիւն վարդապետի միջոցով Երուսաղէմ բերուած մէկ այլ ափսէի արձանագրութիւնը: Բայց նախքան դրան անցնելը, մի երկու խօսք Յարութիւն վարդապետի մասին, որի անունը յաճախ է յիշուում պղնձէ առարկաների վրայ եղած արձանագրութիւններում: Այսպէս, վերը նշուած ափսէից (թ. 479) բացի նրա «ձեռամբ» Երուսաղէմ են բերուել թ.թ. 172, 179, 180, 183, 214, 253, 352, 353, 360, 400, 404, 494, 570 առարկաները եւ հաւանօրէն, շատ այլ իրեր, որոնք մեզ դեռ յայտնի չեն կամ էլ չեն պահպանուել: Ո՞վ էր Յարութիւն վարդապետը: Բոլոր հիմքերը կան կարծելու, որ նա Ս. Յակոբի վանքի միաբան Յարութիւն Արեւելցի վարդապետն էր, որը մահացել է Երուսաղէմում եւ թաղուել Ս. Փրկիչ վանքին կից Սիոն գերեզմանատան մէջ: Նրա տապանագիրը հրատարակուած է Մկրտիչ Եպս. Աղաւունու(1) եւ Տիգրան Հ. Թ. Սաւալանեանցի(2) գրքերում: Նրանից իմանում ենք, որ Յարութիւն վարդապետը վախճանուել է «:»թ.: Ահա այդ տապանագիրը. «Այս է տապանգիրը. «Այս է տապան հանգստեան Արեւելցի Յարութիւն վարդապետին որ հանգեաւ ՌՄԿԸ (1819) ժն դեկտեմբերի»:

Այժմ անցնենք Յարութիւն վարդապետի վերը յիշուած պղնձէ ափսէի վրայ եղած արձանագրութեանը: Այնտեղ գրուած է.

«ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԹԱՊԵՏԻՆ ԻԶՄՈՒՐՈՒ ԹԷՐԶԻ ԷՄՄԱՅԻՆ» (թ. 479):

Այս համառօտ արձանագրութիւնը շատ արժեքաւոր տեղեկութիւն է պարունակում Իզմիր (կամ Զմիւռնիա) քաղաքում 1793թ. թերզիների, այսինքն դերձակներին, էւնաֆութեան՝ արհեստաւորական կազմակերպութեան գոյութեան վերաբերեալ: Մեզ համար մինչեւ այժմ անյայտ մնացած այդ էւնաֆութեան (համաբարութեան) վերաբերեալ ցարդ միակ տեղեկութեան համար պարտական ենք Երուսաղէմի հայկական թանգարանի պահոցներից հանուած այդ փոքրիկ ափսէի վրայ եղած արձանագրութեանը: Կարծում ենք, որ այս փաստը կը հետաքրքրի հայ արհեստաւորական կազմակերպութիւնների պատմութեամբ զբաղող մասնագէտներին:

Հնագոյն առարկան, որի վրայ նշուած է ստացող նուիրակ վարդապետի անունը, 1685 թուականի մի ափսէ է, որի դրսի կողմի վերին եզրին գրուած է հետեւեալը. «ՅԻՇԱՏԱԿ Է ՏԷՐ ԱՐՈՒԹԻՆ Ի ԴՈՒՌՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ԹՎ. ՌՃԼԴ ՏԷՐ ԱԿՈՐ ՎԱՐԹԱՊԵՏԻՆ ՆՎԻՐԱԿՈՒԹԵԱՆ» (թ. 462):

Մեզ չյաջողուեց իմանալ, թէ ո՞վ է եղել վերոյիշեալ Ակոր (իմա՝ Յակոր) վարդապետը: Դա հնարաւոր կը լինի պարզել միայն դիւանական փաստաթղթերի ուսումնասիրման միջոցով: Բայց 17րդ դարից պահպանուած ու նուիրակի անունը կրող միւս երկու առարկաների արձանագրութիւնների մէջ յիշատակուող

1. Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւունցի, Միաբանք եւ այցելուք Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 342:
2. Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Երկրորդ հատոր էջ 1277:
3. Արձանագրութիւն գտնուում է ափսէի ներսի կողմի վերին եզրին: Նոյն տեղում դրոշմակնիքն այնպէս է խփուած, որ ափսէի եզրը 2 սմ. նեղք է տուել:

նուիրակ Մինաս Ամթեցին յայտնի անձնատրութիւն էր: Ասեմք նաեւ, որ այդ արձանագրութիւնները միակն են, որոնց մէջ յիշատակութիւն կայ Ս. Յակոբեանց վանքի սեղանատան վերաբերեալ: Ստորեւ բերում ենք այդ արձանագրութիւնը, որ արուած է 329 համարի տակ պահուող ամսի վրայ. «ՅԻՇԱՏԱԿ է Ի ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐ ՍԵՂԱՆԱ ՏՈՒՆՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅԱՄԹԵՑՈ ՌԶԽԻ ԹՎԻՆ» (1695թ.) (3):

Ճիշտ նոյն րովանդակութիւնը ունի թ. 331ի վրայ եղած արձանագրութիւնը:

Մինաս Ամդեցին յայտնի անձնատրութիւն էր: 1698-1703 թթ. նա եղել է Երուսաղէմի պատրիարքը: Նա եպիսկոպոս էր ձեռնադրուել 1666թ. Ս. Յակոբի վանքում եղիազար կաթողիկոսի ձեռնով: Դրանից յետոյ նոյն կաթողիկոսի հետ ուղեւորուել է Կ. Պոլիս, այնտեղից էլ՝ էջմիածին 1682թ.: 1692թ. ժամանել է Երուսաղէմ եւ դարձել Պոլսեցի Յովհաննէս պատրիարքի աթոռակից: 1696-1698թթ. նա կրկին էջմիածնում էր եւ մասնակցել է Ստեփանոս Զուղայեցու կաթողիկոս օժմանը, որը կարն ժամանակ անց մեռնում է բանտում: 1698թ. Մինաս Ամդեցին մեկնում է Կ. Պոլիս եւ նրա այնտեղ եղած ժամանակ Երուսաղէմի միաբանները նրան ընտրում են պատրիարք: Մինասը Երուսաղէմ է հասնում 1701թ. Սեպտեմբերին, բայց յաջորդ տարի բանտարկուել է Երուսաղէմի վանքի պարտքերի համար: 1703թ. նա նորից է բանտարկուել նոյն պատճառով: Վախճանուել է 1704թ. եւ թաղուած է Ս. Փրկիչ վանքում: Նրա տապանաքարը պահպանուած է եւ կրում է հետեւեալ արձանագրութիւնը. «Այս է տապան Տեառն Մինասայ Ամթեցւոյ

Աստուածաբան Վարդապետի եւ Սրբոյ Աթոռոյս առաջնորդի որ փոխեցաւ ի կեանս վերին, թուին ՌՃԾԳ»:

Մինաս Ամդեցու գրչին է պատկանում «Ազգաբանութիւն քազաւորաց հայոց» գիրքը, որը նա գրել է 1698թ. եւ տպագրուել է մահուանից յետոյ 1735թ. Կ. Պոլսում (երկրորդ հրատարակութիւնը էջմիածնում 1870թ.): Նա է, որ առաջին անգամ լինելով, ձեռագրերի համեմատութեամբ 1700թ. Կ. Պոլսում հրատարակել է Նարեկացու պոեմը: Ունի անտիպ օրագրութիւն, որն ընդգրկում է 1680-1704թթ. (1):

Մեր նկարագրած առարկաների մէջ միակը, որի վրայ արձանագրուած է հայոց կաթողիկոսի անուն, դա 586 համարի տակ պահուող 17րդ դարի մի թաս է: Բերում ենք արձանագրութիւնը առ անց կրնատման.

«ՅԻՇԱՏԱԿ է (անհասկանալի մէկ բառ) ԽԹԻՆ ՈՐԿՈՒՆ ԽԹՃԱ ԿԻՒԼԱՄԻՐԻՆ Ի ԵՐՈՒՍԱՂԷՄ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐԱՅ Ի ԶԵՆԻՆ ԽԱԶԱՏՈՒՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ»:

Խօսքն այստեղ վերաբերում է Կիլիկիոյ կաթողիկոս Խաչատուր Սեբաստացուն, որը 1642-1643թթ. եղել է Կ. Պոլսի պատրիարք, իսկ 1651-1657 թթ. Հալէպի առաջնորդ: 1651թ. Սսոյ Ներսէս կաթողիկոսի հետ նա եկել էր Երուսաղէմ եւ ներկայ եղել Փիլիպպոս կաթողիկոսի գումարած ժողովին: Կարելի է կարծել, որ վերոյիշեալ թասը, ինչպէս եւ, հաւանօրէն, այլ առարկաներ, նա Ս. Յակոբի վանքի միաբաններին է յանձնել Երուսաղէմ կատարած իր երկրորդ ուղեւորութեան ժամանակ, երբ նա արդէն Կիլիկիոյ կաթողիկոսն էր (1658-1663թթ.): Այդ երկրորդ այցելութեան ժամանակ Խաչատուր կաթողիկոսը Ս. Գլխադիրի մատուոտի մէջ

1. Մինաս Ամդեցու մասին աւելի մանրամասն տե՛ս Մ. Աղանունի, նշուած աշխ. էջ 286-287:

գաղտնի տեսակցութիւն է ունեցել Եղիազար Եպիսկոպոսի հետ, որի ժամանակ ֆենարկուել է վերջինիս կաթողիկոս ընտրելու հարցը: 1663թ. Խաչատուր Սեբաստացին Հալէպի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցու մէջ Երուսաղէմի կաթողիկոս է ձեռնադրել Եղիազար Եպիսկոպոսին: Նա մահացել է 1679 թ.:(1)

Պղնձէ մի փոքրիկ փաւէի վրայ, որ Ս. Յակոբի վանքին է նուիրուել 1706թ. կարդացում է Պալատցի Յակոբ վարդապետի անունը.

«ՅԻՇԱՏԱԿ Է ՅԵՐՈՒՍԱՂԷՄ Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ (չի ընթերցում մէկ բառ) ՊԱԼԱԹՅԻ ՅԱԿՈՒՎ ԱՐԴԱՊԵՏԻՆ ԹՎ. ՌՃԾԵ» (1706թ.) թ. 553:

Մկրտիչ Եպս. Աղաւնունու ուսումնասիրութիւնից երեւում է, որ Յակոբ Պալատցին եղել է Ս. Յակոբի վանքի նշանաւոր միաբաններից: 1731թ. նա Ս. Յակոբի վանքի լուսարարապետն էր: Նրա մահից յետոյ, որ տեղի ունեցաւ 1739թ. մի ձեռագիր «Վարք Հարանց»ի մէջ, այժմ պահուում է Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատանը (թ. 598), տրուել է հետեւեալ ծանօթագրութիւնը.

«Ի թուին ՌՃԶ ԵՒ Ը (1739) հանգեաւ ի Քրիստոս յոյսն մեր, երանելի այրն Աստուծոյ Պալատցի Յակոբ Աստուածաբան վարդապետն. քաջ մշակն Սրբոյ Աթոռոյս. եւ բազմաշխատ ծառայն. որ ՌՃԾ ԵՒ Ե թուոյն (1706) եկեալ էր ի Ս. Գահս ԵՒ մտեալ էր իր ծառայութիւն Սրբոյ Քրիստոսեան Աթոռոյս եւ բազում աշխատանս կրեալ, եւ յոլով նուիրակութիւնս արարեալ հրամանաւ երջանիկ եւ սրբազան պատրիարքի տեառն Գրիգորի, սրբակենցաղ հայրապետի, հոգեւոր ծնողին իմոյ, եւ յոլով

արդիւնք եւ սպասք ձեռամբ վերոյգրեալ Յակոբ Աստուածաբան վարդապետին. թէ ոսկեայ, եւ թէ արծաթեայ, եւ թէ կերպասեայ եղեւ հաւաքեցեալ ի նուիրակութենէ սորին, ի ծոց Սրբոյ Աթոռոյս եւ մանաւանդ յոյժ սիրող էր սրբ. տանս . . . (1):

Այժմ կարող ենք, ասել, որ Յակոբ Պալատցու ջանքերով Ս. Յակոբի վանքի սեղանատուն են բերուել նաեւ պղնձէ առարկաներ, որոնցից պահպանուած ներից մէկը գտնուում է մեր ցուցակագրած առարկաների թւում: Մ. Եպս. Աղաւնունու վկայութեամբ Յակոբ Պալատցու անուամբ մի «խորհրդատետր» եւ մի ոսկեթելի եմփիորոն են յիշատակուած Ս. Յակոբի ձեռագրատան մատեաններից մէկի մէջ: Այդ մասին յիշատակարանում ասում է. «ի վայելումն Պալաթցի Միս. Մելգոնի որդի Յակոբ վրդ.ին բազմաշխատ միաբան Ս. Աթոռոյ . . . ՌՃՀԸ» (1729): (2)

Յակոբ Պալատցու տապանագիրը տեղ է գտել Աղաւնունու գրքում (էջ 330): Այնտեղ կարդում ենք. «Այս է տապան հանգստեան Պալաթցի լուսարար Յակոբ վարդապետին Աթոռոյս բազմաշխատ նուիրակի որ հանգեաւ թուին ՌՃԶԸ (1739) ընթերցողդդ տուր գողորմին» (3):

403 համարը ստացած պնակի արձանագրութեան մէջ կարդում ենք հետեւեալը.

«ՅԻՇԱՏԱԿ Է ՅԵՐՈՒՍԱՂԷՄ Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ Ի ՆՎԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԹՈՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԹՎ. ՌՃԶԳ» (1734թ.):

Կարելի է կարծել, որ նուիրակ թորոս վարդապետը Մ. Եպս. Աղաւնունու գրքում յիշատակուած Պոլսեցի թորոս Եպիսկոպոս Պարոնտէրն է, որը վախճանուել

-
1. Մ. Եպս. Աղաւնունի, նշվ. աշխ., էջ 329-330:
 2. Նոյն տեղում, էջ 330:
 3. Նոյն տեղում:

է 1739թ.: Նրա տապանագիրն է. «Այս է տապան հանգստեան ըստամպօլցի Թորոս Պարոնտէրի որ հանգեալ ի ՌՃԶԸ (1739) քվին ընթերցողդ տուֆ գողորմին»(1):

25 եւ 32 համարները ստացած առարկաները, որոնցից առաջինը թաւ է, իսկ երկրորդը՝ երկայնակի պնակ, բերուել են նուիրակ Պօղոս վարդապետի ձեռքով: Ստորեւ բերում ենք նրանց վրայ եղած արձանագրութիւնները.

Թ. 25 «ՅԻՇԱՏԱԿ Է ՀԱՎԱՍԱՐ ԺՈՂՈՎՐԻՈՑՆ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԱ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐԱՅ ԱԹՈՌՈՑՆ ՁԵՌԱՄԲ ՆՎԻՐԱԿ (անհասկանալի է մէկ բառ) ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՌՄ» (1751թ.):

Թ. 32 «ՅԻՇԱՏԱԿ Է ԱՐՈՒԹԷՆԻ ՈՐԴԻ ԶԱՄԻՊԽԱՆԻՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄԱ Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐԱ ՁԵՌԱՄԲ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԹՎ. ՌՃՂԻ» (1745թ.):

Վերը բերուած երկու արձանագրութիւններում յիշատակուած նուիրակ Պօղոս վարդապետը հետագայում պատրիարք ընտրուած Պօղոս Վանեցին է: Ըստ Աղաւնունու ուսումնասիրութեան, նա սերում է «յընտիր եւ նոյս տոհմէ», ձեռնադրուել է 1739թ., եղել է ժամասաց, փակակալի օգնական եւ հրաւիրակ, ապա նշանակուել է Վանի, Սեբաստիայի եւ Թօխատի նուիրակ (1744-1752 թթ.): Ճիշտ այդ ժամանակ էլ՝ 1745 եւ 1751 թթ. նա Ս. Յակոբ վանքի համար ստացել է մեր նշուած պղնձէ առարկաները: Պօղոս վարդապետը եպիսկոպոս է ձեռնադրուել 1752թ. եւ 1755թ. որպէս նուիրակ մեկնել Դրիմ, Ռումելի (մինչեւ 1757թ.) (1): 1753թ. Պօղոս վարդապետի յորդորմամբ Անէմ Մանուկի որդի Սարգիսը Ս. Յակոբի վանքին է նուիրել պղնձէ մի պնակ, որի

վրայ արուել է ներքոյի շեալ արձանագրութիւնը.

«ՅԻՇԱՏԱԿ Է ԱՃԷՄ ՄԱՆԿԷ ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ԱԿՈՐԱՅ ՈՐԴՈՐՄԱՄԲ ՎԱՆՑԻ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՌՄ-ԻՆ» (1753թ.) Թ. 205:

1759թ. Պօղոս Վանեցի վարդապետը եղել է նուիրակ Զմիւռնիայում եւ Նիկոմիդիայում: 1762-1767 թթ. ծառայել է որպէս դարպասընկալ, իսկ 1768թ. ընտրուել է պատրիարք: Բերելով վերոյիշեալ տեղեկութիւնները Պօղոս Վանեցու մասին, Մ. Աղաւնունին այնուհետեւ գրում է, որ եգիպտացի Ալի եւ Մեհմէտ պէյերի ապստամբութեան ժամանակ 1774թ. Պօղոս Վանեցին շատ նեղութիւնների մէջ է ընկել եւ արտաքին ու ներքին թշնամութիւններից զգուած հրաժարական տուել, բայց Կ. Պոլսի Պատրիարքութիւն չի ընդունում նրա հրաժարականը եւ գրութիւն է ուղարկում միաբանութեանը՝ պատրիարքին աջակցելու առաջարկութեամբ: Այս նոյն թուականին Պօղոս պատրիարքը մի քանի եպիսկոպոսների ու վարդապետների հետ միասին գրաւոր խիստ բողոք է ներկայացրել ֆրանսիայի դեսպանին Յոպպէի վանքի դռան բանալու եւ Սիոնի գերեզմանատան խնդիրների համար: Նա մահացել է 1775թ. եւ թաղուել Ս. Փրկչի վանքում: Ահա նրա տապանագիրը.

«Հողանիւթեայ այս դամբարան մարմնոյ միայն սա կայարան. նիւթ առաջին եւ գոյարան. վախճան վերջին առ որ դառնան:

Արդ՝ որ եղեալս է յայս տապան, Պօղոսի արհի բարունական,

1. Մ. Եպս. Աղաւնունի, նշվ. աշխ., էջ 423:
2. Նոյն տեղում, էջ 423-424:

Նստեալ յԱթոռ պատրիարքական,
Որ ի Սաղիմ երկիրն կոչման:

Բակերտ բարի քաջ հովուական

Եւ սիրելի յաջս մարդկան.

Խուն ինչ ցաւօք թողեալ գայս կեանս.

Ծածկեալ եղի ներհող տապան:

ԹՎԻՆ ՌՄԻԴ (1775) (2)

Մ. Աղանունին գրում է, որ Պօղոս Վանեցին թողել է ինքնակենսագրութիւն, որտեղից քաղուած են վերոյիշեալ տեղեկութիւնները:

Նուիրաբերուած պղնձ առարկաների արձանագրութիւնների մէջ յանախ է յիշատակուում Մարգուանցի Պօղոս վարդապետի անունը: 1803 եւ 1804 թթ. նա բերել եւ Ս. Յակոբեանց վանքի սեղանատանն է յանձնել քաղմաքի առարկաներ, որոնցից պահպանուել են տասներեքը (թթ. 54, 86, 171, 175, 189, 201-204, 209, 211, 212, 229, 363, 364, 395, 550): Բացի դրանցից, Պօղոս վարդապետը Ս. Յակոբեանց վանքին է նուիրել 12 հատ արծաթէ կանթեղ: (1) Հետաքրքրական է, որ մի արձանագրութեան մէջ Պօղոս վարդապետը յիշուում է որպէս «ծայրագոյն նվիրակ» (թ. 182):

Ինչպէս նշեցիմք, Թօխատից մեծ քանակութեամբ պղնձ առարկաներ էին բերուում Երուսաղէմ: Այդ գործում յատկապէս մեծ է եղել Կիպրացի Սարգիս վարդապետի դերը: Նա Ս. Յակոբի միաբաններից էր: Նրա միաբանական կնիքը, ըստ Մ. Եպ. Աղանունու, կրել է 1751 թուականը: 1794թ. նա եղել է նուիրակ Հնդկաստանում, իսկ 1813թ.՝ վանական գործերի պատուիրակը: Վախճանուել է 1834թ. Զատկին: Նրա

տապանաւարի արձանագրութիւնը, որ հրատարակուած է Տ. Սաւալանեանցի գրքում, բերում ենք այստեղ ամբողջութեամբ. «Այս է տապան հանգստեան Սրբոյ Աթոռոյս բնիկ միաբան կիպրացի Սարգիս վարդապետին, որ հանգեաւ ի ԹՎԻՆ ՌՄԶԳ (1834) Ապրիլ 21: (1)

Կիպրացի Սարգիս վարդապետը թողել է նամակների հաւաքածու եւ սրմայով բանուած մի թագ: (2) Այժմ կարող ենք աւելացնել, որ Ս. Յակոբեանց վանքի քաղմաշխատ այդ միաբանի անունը փորագրուած է թանգարանի պահոցներում գտնուող տասնհինգ առարկաների վրայ (թթ. 6, 13, 28, 48, 82, 187, 215, 216, 217, 349, 392, 481, 543, 563, 571), որոնք նա ստացել է 1801, 1805, 1806, 1807, եւ 1809 թուականներին: Նրա բերած պնակներից մէկի վրայ եղած արձանագրութիւնից երեւում է, որ նա Թոխաթում գտնուել է նուիրակի հանգամանքով.

«ՅԻՇԱՍԱԿ Է ԹՕԽԱԹՈՒ ՀԱՎԱՍԱՐ ԺՈՂՈՎՐԻԻՑՆ Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ Ի ՆՎԻՐԱԿ ԿԻՊՐԱՑԻ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՌՄԾ» (ՌՄԾ) (1801թ.) թ. 216:

1782թ. Ս. Յակոբեանց վանք են բերուում քացառիկ վարպետութեամբ պատրաստուած երեք կլոր պղնձ սկուտեղներ, որոնք մեր ցուցակում ստացան 298, 299, եւ 300 համարները: Դրանք քաւականի մեծ են, նրանց շրջագծերն անցնում են երկու մետրից (թ. 598ը՝ 202 սմ. է, 599ը՝ 232 սմ., իսկ 300ը՝ 228 սմ.):

Ցաւօք, որոշակի տեղեկութիւն չկայ սկուտեղների պատրաստման տեղի

1. Մ. Եպս. Աղանունի, նշուած աշխ., էջ 427:

2. Տ. Սաւալանեանց, Պատմ. Երուսաղէմի, Բ. հատոր, էջ 1249:

վերաբերեալ. կարելի է ենթադրել որ երբեքն էլ պատրաստուած են Թօխատում: Թ. 598 սկուտեղը նուէր է Թօխատի երկու բնակիչներից: Թ. 599ը նուէր է Ս. Սարգիս եկեղեցու «Քպրոց», այսինքն դպիրներից, իսկ Թ. 600ը՝ «Մարսվանու հավասար ժողովրդեան»: Երեքի ստացողն էլ միեւնոյն անձն է՝ Կարապետ վարդապետը, նուիրատուութեան թուականն էլ նոյնն է՝ 1782ը: Սկուտեղների կատարման որակը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք բոլորն էլ դուրս են եկել նոյն արհեստանոցից:

Ամբողջութեամբ բերում ենք այդ սկուտեղներին վրայ եղած արձանագրութիւնները.

Թ. 598 «ՅԻՇԱՏԱԿ Է ԹՕԽԱԹՅԻ ԱԽՔԱՏ ՄԱՀՏԵՍԻ ՊԵՏՐՈՍԻՆ ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄԱՀՏԵՍԻ ՍՏԵՓԱՆԻ ՈՐԻԳՐԻԳՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ՁԵՌԱՄԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՌՄԼԱ» (1782թ.):

Թ. 599. «ՅԻՇԱՏԱԿ Է ՍՍՐԳԻՍՈՒ ԹՊՐՈՑ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ԱԹՈՌՈՅՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ՁԵՌԱՄԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԹՎՆ. ՌՄԼԱ-ԻՆ» (1782թ.):

Թ. 600. «ՅԻՇԱՏԱԿ Է ՄԱՐՍՎԱՆՈՒ ՀԱՎԱՍԱՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ԱԹՈՌՈՅՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ՁԵՌԱՄԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԹՎՆ. ՌՄԼԱ-ԻՆ» (1782թ.):

Ի՞նչ է յայտնի Կարապետ վարդապետի վերաբերեալ: Կրկին պէտք է դիմենք Մ. Եպս. Աղանունու արժէքաւոր ուսումնասիրութեան օգնութեանը, որը Հայ Երուսաղէմի միաբանների ու այցելուների վերաբերեալ կատարեալ հանրագիտարան է: Վեց տասնեակից աւելի «Կարապետների» մէջ իր տուեալներով ամէնից աւելի մեզ հետաքրքրող անձնաւորութեանը համապատասխանում է Կարապետ Եպս. Եղոկացին (Շփոք մականունով): Նա Ս. Յակոբեանց վանքի

միաբան էր, եղել է Աստրախանի եւ Զմիւռնիայի նուիրակ (1781 թ.): Եպիսկոպոս ձեռնադրուել 1801 թ.: 1816 թ. Նիկովիդիոյ եւ Պրուսայի առաջնորդն էր: Յետոյ պաշտօնավարել է Կ. Պոլսի Ս. Հրեշտակապետաց եկեղեցում, որտեղից վտարուել է: Ապա փախել է Լիբանան: 1819թ. փոխադրուել է Հռոմի Անտոնեանց վանք եւ մահացել է այնտեղ 1819թ. Յուլիսի 28ին: Կարապետ եպիսկոպոսը Ս. Յակոբեանց վանքի մատենադարանին է նուիրել Կոնստիտուի Մեկնութիւն Երգոց Երգոյն հայերէն թարգմանութեան ձեռագիրը:

Սխալուած չենք լինի ասելու, որ վերը բերուած սկուտեղների արձանագրութիւնների մէջ յիշուած Կարապետ վարդապետը այն նոյն Կարապետ Եղոկացին կը լինի, որը 1782թ. դեռեւս Երուսաղէմում էր եւ ստացողի կամ նուիրակի հանգամանքով այցելել էր իր ծննդավայր Եղոկիա (Թօխաթ) եւ այնտեղից բերել այդ գեղեցիկ սկուտեղները:

Իժմախտաբար, չկարողացանք նիւթեր գտնել պղնձէ առարկաների վրայ յիշատակուած բոլոր նուիրակ վարդապետների վերաբերեալ, որոնք իրենց օգտաշատ գործունէութեամբ նպաստել են Ս. Յակոբեանց վանքի տնտեսութեան բարգաւաճման: Հնարաւոր է, որ հետագայում նիւթեր կը յայտնաբերուեն նաեւ նրանց վերաբերեալ:

Ստորեւ տալիս ենք արձանագրութիւնների մէջ յիշուող բոլոր ստացող վարդապետ նուիրակների ցուցակը: Անունների կողքին բերուած են ստացման թուականները.

- Մինաս Ամդեցի - 1695 թ.
- Գաբրիէլ վարդապետ - 17րդ դ.
- Պալատցի Յակոբ վարդապետ - 1706 թ., 1725 թ.
- Թորոս վարդապետ - 1734 թ.
- Վանցի Պօղոս վարդապետ -

- 1745 թ., 1751 թ., 1753 թ.
- Սիմեոն վարդապետ - 1766 թ.
- Կօրցի Սարգիս վարդապետ - 1768 թ.
- Վարդան վարդապետ - 1776 թ.
- Թօխատցի Սարգիս վարդապետ - 1777 թ., 1778 թ.
- Նւղոկացի Կարապետ վարդապետ - 1782 թ.
- Յարութիւն վարդապետ - 1792 թ., 1796 թ.
- Մարգուանցի Պօղոս վարդապետ - 1803 թ., 1804 թ.
- Կիպրացի Սարգիս վարդապետ - 1801 թ., 1804 թ., 1806 թ., 1807 թ., 1808 թ.
- Պոլսեցի Յակոբ վարդապետ - 1821 թ., 1827 թ.

Վերը յիշուած հոգեւորականներից բացի ստացողների մէջ է նաեւ Ստեփաննոս կաթողիկոսը (17րդ դ.), որը Ս. Յակոբեանց վանքի այցելու էր: 1769 թ. յիշատակուած է Սէրգիս վարդապետը, որը հաւանաբար նոյն ինքը Սարգիս վարդապետ Թօխաթեցին է:

Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան «էդուարդ եւ Հէլէն Մարտիկեան» թանգարանի պահոցներում, ինչպէս եւ ցուցասրահներում գտնուող պղնձեղէն առարկաները պերեախօս ապացոյց են այն բանի, որ 16-17րդ դարերում, նախորդ ժամանակների նման, հայաստանում պղնձագործութիւնը շատ տարածուած եւ զարգացած է եղել: Պղնձէ առարկաները վաղուց մտած լինելով կենցաղային առօրեայ օգտագործուող իրերի շարքը, լայնօրէն կիրառուել են նաեւ վանական տնտեսութեան մէջ:

Հայ արհեստների պատմութեան հարցերին նուիրուած Վալենտինա Արքահամեանի ուսումնասիրութեան

«Պղնձագործութիւն» գլխում (1) լուրջ ուշադրութիւն է ընծայուած աւելի վաղ շրջանի՝ 9-13րդ դարերից պահպանուած պղնձէ յուշարձաններին, իսկ աւելի ուշ ժամանակների նիւթերը դուրս են մնացել նրա հետազօտութեան տեսադաշտից: Դա յատկապէս վերաբերում է Երուսաղէմի հայոց վանքի պղնձեղէնին, որն ամէնաճոխ եւ հարուստ հաւաքածուն է մեզանում: Պատճառը հետազօտողի համար եղել է նիւթերի անմատչելիութիւնը:

Կարծում ենք, որ հետագայ աշխատանքները, յատկապէս Հայոց վանքի տարածքում գտնուող պղնձէ բոլոր իրերի մանրակրկիտ հաշուառումն ու նկարագրութիւնը, նպաստաւոր կը լինեն ոչ միայն ամբողջական պատկերացում ստանալու նրանց վերաբերեալ, այլեւ թոյլ կը տան հարկ եղած խորութեամբ ուսումնասիրել եւ վեր հանել հայ պղնձագործութեան պատմութիւնն իր բոլոր կողմերով: Առանց Երուսաղէմի պղնձեղէն հաւաքածուի դժուար, եթէ չասենք անկարելի կը լինի ստեղծելու հայ պղնձագործութեան ուշ միջնադարի լիակատար եւ ամբողջական պատմութիւնը:

Հանելի է մեզ մտածել, որ այդ հարուստ նիւթերի հիման վրայ հնարաւոր կը դառնայ ստեղծելու իր տեսակի մէջ եզակի եւ մեզ պատիւ բերող ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂՆՁԵՂԷՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ, որը ցոյց կը տայ այդ կարեւոր արհեստագործութեան մէջ միջնադարեան հայ մասնագէտների դրսեւորած մեծ վարպետութիւնը եւ բարձր մշակը: Իսկ դրա համար կան բոլոր անհրաժեշտ հիմքերը:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

1. Վ. Ա. Արքահամեան, Արհեստները Հայաստանում 4-18րդ դ.դ., Երեւան, 1956, էջ 55-66: